



Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարք՝ թիվ 223

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրություն

Ստրասբուրգ, 10 հոկտեմբերի 2018 թվական

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները եւ 1981 թվականի հունվարի 28-ին Ստրասբուրգում ստորագրման համար բացված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի (ԵՊՇ թիվ 108), (այսուհետ՝ Կոնվենցիա) մյուս Կողմերը,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի արդարադատության նախարարների 30-րդ համաժողովում ընդունված՝ «Երրորդ հազարամյակում տվյալների պաշտպանության եւ գաղտնիության մասին» թիվ 3 բանաձեւը (Ստամբուլ, Թուրքիա, 2010 թվականի նոյեմբերի 24-26),

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Համացանցում եւ առցանց լրատվամիջոցներում գաղտնիության եւ անձնական տվյալների պաշտպանության մասին» 1843 (2011) բանաձեւը եւ «Կիբեռտարածությունում օգտագործողների պաշտպանությունը եւ անվտանգությունը բարելավելու մասին» 1986 (2014) բանաձեւը,

հաշվի առնելով Մշտական հանձնաժողովի կողմից Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի անունից 2017 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (ԵՊՇ թիվ 108) փոփոխող արձանագրության նախագծի մասին» 296 (2017) կարծիքը եւ դրա բացատրական հուշագիրը,

համարելով, որ Կոնվենցիայի ընդունումից հետո անձնական տվյալների մշակման առումով անհատների պաշտպանության նոր մարտահրավերներ են առաջացել,

համարելով, որ անհրաժեշտ է ապահովել, որ Կոնվենցիան շարունակի առանցքային դեր խաղալ անձնական տվյալների մշակման առումով անհատների պաշտպանության եւ առավել ընդհանուր՝ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության հարցում,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

1. Կոնվենցիայի նախաբանի առաջին ներածական դրույթը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները եւ մյուս ստորագրող կողմերը,»:

2. Կոնվենցիայի նախաբանի երրորդ ներածական դրույթը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«համարելով, որ անհրաժեշտ է ապահովել յուրաքանչյուր անհատի մարդկային արժանապատվությունը եւ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաեւ, հաշվի առնելով տվյալների մշակման եւ անձնական տվյալների հոսքերի բազմազանեցումը, խորացումն ու գլոբալացումը, անձի՝ իր անձնական տվյալները վերահսկելու եւ այդ տվյալները մշակելու իրավունքի վրա հիմնված անձնական ինքնավարությունը,»:

3. Կոնվենցիայի նախաբանի չորրորդ ներածական դրույթը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«վկայակոչելով, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը պետք է դիտարկվի ըստ հասարակության մեջ դրա դերի եւ համատեղելի լինի մարդու այլ իրավունքների եւ հիմնարար ազատությունների, այդ թվում՝ արտահայտվելու ազատության հետ,»:

4. Կոնվենցիայի նախաբանի չորրորդ ներածական դրույթից հետո ավելացնել հետեւյալ ներածական դրույթը.

«համարելով, որ սույն Կոնվենցիան թույլ է տալիս դրանում սահմանված կանոնները կիրարկելիս հաշվի առնել պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքի սկզբունքը,»:

5. Կոնվենցիայի նախաբանի հինգերորդ ներածական դրույթը հանել:

Ավելացնել նոր՝ վեցերորդ եւ յոթերորդ ներածական դրույթներ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«գիտակցելով, որ անհրաժեշտ է գլոբալ մակարդակում խթանել անձնական տվյալների գաղտնիության եւ պաշտպանության նկատմամբ հարգանքի հիմնարար արժեքները՝ դրանով իսկ նպաստելով ժողովուրդների միջեւ տեղեկատվության ազատ հոսքին,»

«գիտակցելով Կոնվենցիայի Կողմերի միջեւ միջազգային համագործակցությունն ամրապնդելու շահագրգռվածությունը,»:

Հոդված 2

Կոնվենցիայի 1-ին հոդվածի տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն Կոնվենցիայի նպատակն է պաշտպանել յուրաքանչյուր անհատի (անկախ նրա ազգությունից կամ բնակության վայրից)՝ նրա անձնական տվյալների մշակման առնչությամբ՝ դրանով իսկ նպաստելով նրա՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների եւ մասնավորապես՝ մասնավոր կյանքի իրավունքի նկատմամբ հարգանքին:»:

Հոդված 3

1. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«բ. «տվյալների մշակում» նշանակում է՝ անձնական տվյալների առնչությամբ իրականացվող ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է, օրինակ, այդպիսի տվյալներ հավաքելու, պահելու, պահպանելու, փոփոխելու, վերականգնելու, բացահայտելու, հասանելի դարձնելու, վերացնելու կամ ոչնչացնելու կամ էլ այդ տվյալների վերաբերյալ տրամաբանական եւ (կամ) թվաբանական գործողություններ կատարելու հետ.»:»:

2. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «գ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«գ. այն դեպքում, երբ չի կիրառվում ավտոմատացված մշակում, «տվյալների մշակում» նշանակում է՝ ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որն իրականացվում է անձնական

տվյալների նկատմամբ այդպիսի տվյալների կառուցվածքային խմբի շրջանակում, որոնք հասանելի կամ վերականգնելի են հատուկ չափանիշների համաձայն.»:

3. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 - «դ. «վերահսկիչ» նշանակում է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական մարմին, ծառայություն, գործակալություն կամ որեւէ այլ մարմին, որը միայնակ կամ այլոց հետ համատեղ տվյալների մշակման առնչությամբ որոշումներ կայացնելու լիազորություն ունի.»:
4. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «դ» կետից հետո ավելացնել հետևյալ նոր կետերը.
 - «ե. «ստացող» նշանակում է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական մարմին, ծառայություն, գործակալություն կամ որեւէ այլ մարմին, որին բացահայտվում կամ հասանելի են դարձվում տվյալները.
 - զ. «մշակող» նշանակում է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական մարմին, ծառայություն, գործակալություն կամ որեւէ այլ մարմին, որը վերահսկիչի անունից մշակում է անձնական տվյալները:»:

Հոդված 4

1. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է կիրառել սույն Կոնվենցիան տվյալների մշակման առնչությամբ՝ իր իրավազորության տակ գտնվող պետական եւ մասնավոր ոլորտներում՝ դրանով իսկ ապահովելով յուրաքանչյուր անհատի՝ իր անձնական տվյալների պաշտպանության իրավունքը:»:
2. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն Կոնվենցիան չի կիրառվում անհատի կողմից բացառապես անձնական կամ կենցաղային գործունեության ընթացքում իրականացվող տվյալների մշակման առնչությամբ:»:

3. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-6-րդ պարբերությունները հանել:

Հոդված 5

Կոնվենցիայի II գլխի վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Գլուխ II. Անձնական տվյալների պաշտպանության հիմնական սկզբունքները»:

Հոդված 6

1. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր Կողմ իր օրենսդրության շրջանակներում ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ սույն Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու եւ դրանց արդյունավետ կիրառումն ապահովելու համար:»:

2. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Այդ միջոցները ձեռնարկվում են յուրաքանչյուր Կողմի կողմից եւ ուժի մեջ են մտնում սույն Կոնվենցիան վավերացնելու կամ դրան միանալու պահից:»:

3. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից հետո ավելացնել նոր պարբերություն.

«3. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

ա. հնարավորություն տալ VI գլխում սահմանված Կոնվենցիայի կոմիտեին գնահատելու սույն Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու համար իր կողմից իր օրենսդրության շրջանակներում ձեռնարկված միջոցների արդյունավետությունը, եւ

բ. ակտիվորեն նպաստել գնահատման այս գործընթացին:»:

Հոդված 7

1. 5-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 5. Տվյալների մշակման իրավաչափությունը եւ տվյալների

որակը»:

2. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

- «1. Տվյալների մշակումը պետք է համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին եւ մշակման բոլոր փուլերում արտացոլի արդար հավասարակշռություն համապատասխան բոլոր շահերի (լինեն դրանք հանրային, թե մասնավոր) եւ նժարին դրված իրավունքների ու ազատությունների միջեւ:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ տվյալների մշակումը հնարավոր լինի իրականացնել տվյալների սուբյեկտի ազատ, կոնկրետ, տեղեկացված եւ հստակ համաձայնության հիման վրա կամ օրենքով սահմանված որեւէ այլ իրավաչափ հիմքով:
3. Մշակման ենթարկվող անձնական տվյալները պետք է մշակվեն օրինական ճանապարհով:
4. Մշակման ենթարկվող անձնական տվյալները պետք է՝
 - ա. մշակվեն արդար եւ թափանցիկ եղանակով,
 - բ. հավաքվեն հստակ արտահայտված, կոնկրետ եւ իրավաչափ նպատակներով եւ չմշակվեն այդ նպատակների հետ անհամատեղելի եղանակով. հանրային շահերից ելնելով՝ արխիվացման նպատակներով, գիտական կամ պատմական հետազոտություններ կատարելու նպատակներով կամ վիճակագրական նպատակներով հետագա մշակումը համապատասխան երաշխիքների առկայության դեպքում պետք է այդ նպատակների հետ համատեղելի լինի,
 - գ. լինեն համապատասխան, վերաբերելի եւ դրանց մշակման նպատակների սահմանները չգերազանցող,
 - դ. լինեն ճշգրիտ եւ անհրաժեշտության դեպքում պահվեն թարմացված վիճակում,
 - ե. պահպանվեն այնպիսի եղանակով, որը թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտներին ոչ ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է այդ տվյալները մշակելու նպատակների համար:»:

Հոդված 8

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Հետեւյալ տվյալների մշակումը.

- գենետիկ տվյալներ,
- իրավախախտումներին, քրեական վարույթներին եւ դատվածություններին ու հարակից անվտանգության միջոցներին վերաբերող անձնական տվյալներ,
- կենսաչափական տվյալներ, որոնցով անձը միանշանակորեն նույնականացվում է,
- ռասայական կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, արհեստակցական միություններին անդամակցությանը, կրոնական կամ այլ համոզմունքների, առողջությանը կամ սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ բացահայտող անձնական տվյալներ.

թույլատրվում է միայն սույն Կոնվենցիայի երաշխիքները լրացնող պատշաճ երաշխիքներ օրենքում ամրագրված լինելու դեպքում:

2. Այդպիսի երաշխիքները կպաշտպանեն այն ռիսկերից, որոնք կարող են այդպիսի գաղտնի տվյալները մշակելու հետեւանքով առաջանալ տվյալների սուբյեկտի շահերի, իրավունքների եւ հիմնարար ազատությունների առումով, մասնավորապես՝ խտրականության ռիսկը:»:

Հոդված 9

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ վերահսկիչը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողը, անվտանգության համապատասխան միջոցներ ձեռնարկի այնպիսի ռիսկերի դեմ, ինչպիսիք են, օրինակ՝ անձնական տվյալների պատահական կամ չթույլատրված մուտքը, ոչնչացումը, կորուստը, օգտագործումը, փոփոխումը կամ բացահայտումը:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ վերահսկիչն անհապաղ ծանուցի առնվազն սույն Կոնվենցիայի 15-րդ հոդվածի իմաստով իրավասու վերահսկիչ մարմնին տվյալների մշակմանն առնչվող այն

խախտումների մասին, որոնք կարող են լրջորեն խախտել տվյալների սուբյեկտների իրավունքները եւ հիմնարար ազատությունները:»:

Հոդված 10

Կոնվենցիայի 7-րդ հոդվածից հետո ավելացնել նոր՝ 8-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 8. Մշակման թափանցիկությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ վերահսկիչը տեղեկացնի տվյալների սուբյեկտներին՝

ա. իր ինքնության եւ մշտական բնակության կամ գտնվելու վայրի մասին.

բ. նախատեսված մշակման իրավական հիմքի եւ նպատակների մասին.

գ. մշակվող անձնական տվյալների կատեգորիաների մասին.

դ. անձնական տվյալներն ստացողների կամ ստացողների կատեգորիաների մասին, եթե այդպիսիք կան, եւ

ե. 9-րդ հոդվածում սահմանված իրավունքներն իրականացնելու միջոցների մասին,

ինչպես նաեւ ցանկացած այլ անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություն՝ անձնական տվյալների արդար եւ թափանցիկ մշակումն ապահովելու համար:

2. 1-ին պարբերությունը չի կիրառվում, եթե տվյալների սուբյեկտն արդեն տիրապետում է համապատասխան տեղեկությունների:

3. Եթե անձնական տվյալները չեն հավաքվում տվյալների սուբյեկտներից, ապա վերահսկիչից չի պահանջվում տրամադրել այդպիսի տեղեկություններ, եթե մշակումը հստակորեն սահմանվում է օրենքով, կամ եթե դա անհնար է կամ անհամաչափ ջանքեր է պահանջում:»:

Հոդված 11

1. Կոնվենցիայի նախկին 8-րդ հոդվածը վերահամարակալել 9-րդ հոդվածի եւ վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Տվյալների սուբյեկտի իրավունքները»:

2. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (նոր՝ 9-րդ հոդված) տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր անհատ պետք է իրավունք ունենա՝

ա. չենթարկվելու այնպիսի որոշման, որը նշանակալիորեն ազդում է իր վրա եւ հիմնված է բացառապես տվյալների ավտոմատացված մշակման վրա՝ առանց հաշվի առնելու իր տեսակետները.

բ. ըստ պահանջի, ողջամիտ ժամանակահատվածում եւ առանց ավելորդ ուշացումների կամ ծախսերի՝ ձեռք բերելու իրեն վերաբերող անձնական տվյալների մշակման մասին հաստատում, մշակված տվյալների՝ դյուրըմբռնելի ձեով հաղորդակցություն, դրանց ծագման, պահպանման ժամկետի մասին հասանելի ամբողջ տեղեկատվությունը, ինչպես նաեւ ցանկացած այլ տեղեկատվություն, որը վերահսկիչը պետք է տրամադրի՝ ապահովելու համար մշակման թափանցիկությունը՝ 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համապատասխան.

գ. ըստ պահանջի՝ ձեռք բերելու տվյալների մշակման հիմքում ընկած փաստարկների մասին տեղեկություններ, եթե այդպիսի մշակման արդյունքները կիրառվում են իր նկատմամբ.

դ. ցանկացած պահի իր իրավիճակի հետ կապված հիմքով վիճարկելու իրեն վերաբերող անձնական տվյալների մշակումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերահսկիչը մշակման համար այնպիսի իրավաչափ հիմքեր է ներկայացնում, որոնք գերակայում են իր շահերի կամ իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ.

ե. ըստ պահանջի, անվճար եւ առանց անհարկի ուշացման՝ հասնելու, ըստ իրավիճակի, նման տվյալների ուղղմանը կամ վերացմանը, եթե դրանք մշակվում կամ մշակվել են սույն Կոնվենցիայի դրոյթների խախտմամբ.

զ. 12-րդ հոդվածի համաձայն՝ ունենալու իրավական պաշտպանության միջոց, եթե խախտվել են իր՝ սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքները.

- է. անկախ իր ազգությունից կամ բնակության վայրից՝ օգտվելու 15-րդ հոդվածի իմաստով վերահսկիչ մարմնի օժանդակությունից՝ սույն Կոնվենցիայով նախատեսված իր իրավունքներն իրականացնելիս:
2. 1-ին պարբերության «ա» կետը չի կիրառվում, եթե որոշումը թույլատրելի է այնպիսի օրենքով, որի գործողությունը տարածվում է վերահսկիչի վրա, եւ որով նաեւ սահմանվում են համապատասխան միջոցներ՝ տվյալների սուբյեկտի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը երաշխավորելու համար:»:

Հոդված 12

Կոնվենցիայի նոր՝ 9-րդ հոդվածից հետո ավելացնել նոր՝ 10-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 10. Լրացուցիչ պարտավորությունները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ վերահսկիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողները, ձեռնարկեն համապատասխան բոլոր միջոցները՝ սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները կատարելու համար, եւ կարողանան ապացուցել 11-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն ընդունված ներպետական օրենսդրության համապատասխան, մասնավորապես՝ 15-րդ հոդվածով սահմանված իրավասու վերահսկիչ մարմնին, որ իրենց հսկողության տակ իրականացվող տվյալների մշակումը համապատասխանում է սույն Կոնվենցիայի դրույթներին:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ վերահսկիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողները, նախքան այդպիսի մշակում սկսելն ուսումնասիրեն տվյալների նախատեսված մշակման հավանական ազդեցությունը տվյալների սուբյեկտների իրավունքների եւ հիմնարար ազատությունների վրա եւ կազմակերպեն տվյալների մշակումն այնպես, որ հնարավոր լինի կանխել կամ նվազագույնի հասցնել այդ իրավունքներին եւ հիմնարար ազատություններին միջամտության ռիսկը:
3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ վերահսկիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մշակողները, կիրարկեն տեխնիկական եւ

կազմակերպչական այնպիսի միջոցներ, որոնցով հաշվի են առնվում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետեանքները տվյալների մշակման բոլոր փուլերում:

4. Յուրաքանչյուր կողմ, հաշվի առնելով տվյալների սուբյեկտների շահերից, իրավունքներից եւ հիմնարար ազատություններից բխող ռիսկերը, կարող է 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունների դրույթների կիրառումը համապատասխանեցնել սույն Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնող օրենքի դրույթներին՝ տվյալների բնույթի եւ ծավալի, մշակման բնույթի, շրջանակի ու նպատակի եւ անհրաժեշտության դեպքում՝ վերահսկիչի կամ մշակողի գործունեության ընդգրկվածության համաձայն:»:

Հոդված 13

Կոնվենցիայի նախկին՝ 9-12-րդ հոդվածները դառնում են Կոնվենցիայի 11-14-րդ հոդվածներ:

Հոդված 14

Կոնվենցիայի 9-րդ հոդվածի (նոր՝ 11-րդ հոդված) տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն գլխում սահմանված դրույթների մասով բացառություն չպետք է թույլատրվի՝ բացառությամբ 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության, 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության, 8-րդ հոդվածի 1-ին պարբերության եւ 9-րդ հոդվածի դրույթների, երբ այդպիսի բացառություն նախատեսված է օրենքով, դրանով հարգվում է հիմնարար իրավունքների եւ ազատությունների էությունը, եւ այն ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ ու համաչափ միջոց է.

ա. ազգային անվտանգության, պաշտպանության, հասարակական անվտանգության, պետության՝ կարեւոր տնտեսական եւ ֆինանսական շահերի պաշտպանության, դատական իշխանության անաչառության եւ անկախության կամ քրեական իրավախախտումների կանխարգելման, քննության ու քրեական հետապնդման եւ քրեական պատժամիջոցների իրականացման ու

հանրային ընդհանուր շահից բխող այլ էական նպատակների համար.

բ. տվյալների սուբյեկտի կամ այլոց իրավունքների ու հիմնարար ազատությունների, մասնավորապես՝ արտահայտվելու ազատության պաշտպանության համար:

2. 8-րդ եւ 9-րդ հոդվածներում նշված դրույթների իրականացման սահմանափակումները կարող են նախատեսվել օրենքով՝ հանրային շահից ելնելով, արխիվացման նպատակներով, գիտական կամ պատմական հետազոտության նպատակներով կամ վիճակագրական նպատակներով տվյալների մշակման առնչությամբ, եթե առկա չէ տվյալների սուբյեկտների իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման նկատելի վտանգ:

3. Ի հավելումն սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ թույլատրվող բացառությունների, հղում կատարելով ազգային անվտանգության եւ պաշտպանության նպատակներով մշակման գործունեությանը՝ յուրաքանչյուր Կողմ կարող է նախատեսել բացառություններ 4-րդ հոդվածի 3-րդ պարբերությունից, 14-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ պարբերություններից եւ 15-րդ հոդվածի 2-րդ պարբերության «ա», «բ», «գ» եւ «դ» կետերից՝ օրենքով սահմանված կարգով եւ միայն այնքանով, որքանով դա ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ եւ համաչափ միջոց է՝ այդ նպատակին հասնելու համար:

Ասվածը չի հակասում այն պահանջին, որ ազգային անվտանգության եւ պաշտպանության նպատակներով մշակման գործունեությունը ենթակա է անկախ եւ արդյունավետ վերանայման ու վերահսկման՝ համապատասխան Կողմի ներպետական օրենսդրության համաձայն:»:

Հոդված 15

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի (նոր՝ 12-րդ հոդված) տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է սահմանել պատշաճ դատական եւ ոչ դատական պատասխանատվության միջոցներ եւ իրավական պաշտպանության միջոցներ՝ սույն Կոնվենցիայի դրույթները խախտելու համար:»:

Հոդված 16

III գլխի վերնագիրը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«Գլուխ III. Անձնական տվյալների անդրսահմանային հոսքը»:

Հոդված 17

1. Կոնվենցիայի 12-րդ հոդվածի (նոր՝ 14-րդ հոդված) վերնագիրը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«Հոդված 14. Անձնական տվյալների անդրսահմանային հոսքը»:

2. Կոնվենցիայի 12-րդ հոդվածը (նոր՝ 14-րդ հոդված) շարադրել հետեյալ խմբագրությամբ.

«1. Կողմը բացառապես անձնական տվյալների պաշտպանության նպատակով չպետք է արգելի կամ այն ստացողից հատուկ թույլտվություն պահանջի այնպիսի տվյալների փոխանցման համար, որոնք գտնվում են Կոնվենցիայի մեկ այլ Կողմի իրավազորության ներքո: Այդ Կողմը, այնուամենայնիվ, կարող է այդպես գործել, եթե առկա է իրական եւ լուրջ վտանգ, որ փոխանցումը մեկ այլ Կողմի կամ տվյալ մեկ այլ Կողմից Կողմ չհանդիսացող պետությանը կհանգեցնի Կոնվենցիայի դրույթների շրջանցման: Կողմը կարող է այդպես գործել նաեւ, եթե սահմանափակված է պաշտպանության ներդաշնակեցված կանոններով այն պետությունների կողմից, որոնք տարածաշրջանային միջազգային կազմակերպության անդամ են:

2. Եթե ստացողը սույն Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող որեւէ պետության կամ միջազգային կազմակերպության իրավազորության ներքո է, ապա անձնական տվյալների փոխանցումը կարող է իրականանալ միայն այն դեպքում, երբ ապահովված է սույն Կոնվենցիայի դրույթների վրա հիմնված պաշտպանության պատշաճ մակարդակ:

3. Պաշտպանության պատշաճ մակարդակ կարող է ապահովվել՝

ա. այդ պետության կամ միջազգային կազմակերպության օրենքով, այդ թվում՝ կիրառելի միջազգային պայմանագրերով կամ համաձայնագրերով, կամ

բ. փոխանցման եւ հետագա մշակման մեջ ներգրավված անձանց

կողմից ընդունված եւ կիրարկվող՝ պարտադիր ուժ ունեցող եւ կատարման ենթակա գործիքներով ապահովվող՝ ժամանակավոր կամ հաստատված ստանդարտ երաշխիքներով:

4. Չհակասելով նախորդ պարբերությունների դրույթներին՝ յուրաքանչյուր Կողմ կարող է նախատեսել, որ անձնական տվյալների փոխանցումը հնարավոր լինի իրականացնել, եթե՝
 - ա. տվյալների սուբյեկտը միանշանակ, կոնկրետ եւ ինքնակամ համաձայնություն է տվել պատշաճ երաշխիքների բացակայության դեպքում առաջացող ռիսկերի մասին տեղեկացվելուց հետո, կամ
 - բ. տվյալների սուբյեկտի կոնկրետ շահերը որոշակի դեպքում այդպես են պահանջում, կամ
 - գ. օրենքով նախատեսված են գերակայող իրավաչափ շահեր, մասնավորապես՝ կարելի է հանրային շահեր, եւ այդպիսի փոխանցումը ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ եւ համաչափ միջոց է, կամ
 - դ. դա ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ եւ համաչափ միջոց է ազատ արտահայտվելու համար:
 5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն Կոնվենցիայի 15-րդ հոդվածի իմաստով իրավասու վերահսկիչ մարմնին տրամադրվի համապատասխան ամբողջ տեղեկատվությունը, որը վերաբերում է 3-րդ պարբերության «բ» կետում եւ, ըստ պահանջի, 4-րդ պարբերության «բ» եւ «գ» կետերում նշված տվյալների փոխանցմանը:
 6. Յուրաքանչյուր Կողմ նաեւ ապահովում է, որ վերահսկիչ մարմինն իրավունք ունենա տվյալները փոխանցող անձից պահանջելու ներկայացնել երաշխիքների արդյունավետությունը կամ գերակա իրավաչափ շահերի առկայությունը հաստատող ապացույցներ, եւ որ վերահսկիչ մարմինը տվյալների սուբյեկտների իրավունքները եւ հիմնարար ազատությունները պաշտպանելու համար կարողանա այդպիսի փոխանցումներն արգելել, կասեցնել կամ որոշակի պայմանների ենթարկել:»:
3. Կոնվենցիայի 12-րդ հոդվածի (նոր՝ 14-րդ հոդված) տեքստը ներառում է 2001 թվականի՝ Վերահսկիչ մարմինների եւ տվյալների անդրսահմանային հոսքերի վերաբերյալ լրացուցիչ արձանագրության (ԵՊՇ թիվ 181) 2-րդ հոդվածի դրույթները, որոնք վերաբերում են Կոնվենցիայի Կողմի

իրավազորության ներքո չգտնվող ստացողին ուղղված՝ անձնական տվյալների անդրահամայնի հոսքերին:

Հոդված 18

Կոնվենցիայի III գլխից հետո ավելացնել նոր՝ IV գլուխ՝ հետեյալ բովանդակությամբ.

«Գլուխ IV. Վերահսկիչ մարմինները»:

Հոդված 19

Նոր՝ 15-րդ հոդվածը ներառում է 2001 թվականի Լրացուցիչ արձանագրության (ԵՊՇ թիվ 181) 1-ին հոդվածի դրույթները եւ ունի հետեյալ բովանդակությունը.

«Հոդված 15. Վերահսկիչ մարմինները

1. Յուրաքանչյուր Կողմի համար նախատեսվում են մեկ կամ մի քանի մարմիններ, որոնք պատասխանատու են սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունն ապահովելու համար:
2. Այդ նպատակով այդ մարմինները պետք է՝
 - ա. ունենան քննություն եւ միջամտություն կատարելու լիազորություններ.
 - բ. իրականացնեն 14-րդ հոդվածով սահմանված՝ տվյալների փոխանցման հետ կապված գործառույթներ, մասնավորապես՝ ստանդարտ երաշխիքների հաստատում.
 - գ. լիազորություն ունենան սույն Կոնվենցիայի դրույթների խախտումների վերաբերյալ որոշումներ կայացնելու եւ մասնավորապես կարողանան կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ.
 - դ. լիազորություն ունենան ներգրավվելու դատական վարույթներում կամ սույն Կոնվենցիայի դրույթների խախտումները ներկայացնելու իրավասու դատական մարմիններում.
 - ե. նպաստեն՝
 - ի. իրենց գործառույթների եւ լիազորությունների, ինչպես նաեւ

իրենց գործունեության մասին հանրային իրազեկման բարձրացմանը,

ii. տվյալների սուբյեկտների իրավունքների եւ այդ իրավունքների իրականացման մասին հանրային իրազեկման բարձրացմանը,

iii. սույն Կոնվենցիայով սահմանված իրենց պարտականությունների մասին վերահսկիչների եւ մշակողների իրազեկման բարձրացմանը.

հատուկ ուշադրություն է դարձվում երեխաների եւ այլ խոցելի անհատների տվյալների պաշտպանության իրավունքներին:

3. Պետք է խորհրդակցել իրավասու վերահսկիչ մարմինների հետ այն ցանկացած օրենսդրական կամ վարչական միջոցի համար առաջարկների առնչությամբ, որով նախատեսվում է անձնական տվյալների մշակում:
4. Յուրաքանչյուր իրավասու վերահսկիչ մարմին պետք է քննի տվյալների սուբյեկտների կողմից ներկայացված՝ իրենց տվյալների պաշտպանության իրավունքների վերաբերյալ պահանջներն ու բողոքները եւ տվյալների սուբյեկտներին պետք է տեղեկացնի առաջընթացի մասին:
5. Իրենց պարտականությունները կատարելիս եւ իրենց լիազորություններն իրականացնելիս վերահսկիչ մարմինները պետք է գործեն լիակատար անկախության ու անաչառության պայմաններում եւ այդ ընթացքում չպետք է ո՛չ հայցեն եւ ո՛չ էլ ստանան ցուցումներ:
6. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ վերահսկիչ մարմիններն ունենան իրենց գործառույթների արդյունավետ կատարման եւ իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:
7. Յուրաքանչյուր վերահսկիչ մարմին պետք է պատրաստի եւ հրապարակի իր գործունեությունը ներկայացնող պարբերական զեկույց:
8. Վերահսկիչ մարմնի անդամներն ու աշխատակազմը պարտավորվում են իրենց պարտականությունները կատարելիս եւ իրենց լիազորություններն իրականացնելիս պահպանել իրենց համար հասանելի կամ հասանելի եղած գաղտնի տեղեկությունների մասով գաղտնիությունը:

9. Վերահսկիչ մարմինների որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:
10. Իրենց դատական լիազորությունների շրջանակներում գործելիս մարմինների կողմից իրականացվող մշակումը չպետք է լինի վերահսկիչ մարմինների իրավասության ներքո:»:

Հոդված 20

1. Կոնվենցիայի IV-VII գլուխները վերահամարակալել որպես Կոնվենցիայի V-VIII գլուխներ:
2. V գլխի վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«Գլուխ V. Համագործակցությունը եւ փոխադարձ օժանդակությունը»:
3. Ավելացնել նոր՝ 17-րդ հոդված. Կոնվենցիայի նախկին 13-27-րդ հոդվածները դառնում են Կոնվենցիայի 16-31-րդ հոդվածներ:

Հոդված 21

1. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի (նոր՝ 16-րդ հոդված) վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«Հոդված 16. Վերահսկիչ մարմինների նշանակումը»:
2. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի (նոր՝ 16-րդ հոդված) 1-ին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«1. Կողմերը համաձայնում են համագործակցել եւ միմյանց փոխադարձ օժանդակություն տրամադրել սույն Կոնվենցիան կիրարկելու համար:»:
3. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի (նոր՝ 16-րդ հոդված) 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«2. Այդ նպատակով՝
 - ա. յուրաքանչյուր Կողմ նշանակում է սույն Կոնվենցիայի 15-րդ հոդվածի իմաստով մեկ կամ մի քանի վերահսկիչ մարմիններ, որոնցից յուրաքանչյուրի անվանումն ու հասցեն Կողմը հաղորդում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին.
 - բ. յուրաքանչյուր Կողմ, որը նշանակել է մեկից ավելի վերահսկիչ

մարմիններ, յուրաքանչյուր մարմնի իրավասությունների շրջանակը սահմանում է նախորդ կետում նշված իր հաղորդագրության մեջ:»:

4. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի (նոր՝ 16-րդ հոդված) 3-րդ պարբերությունը հանել:

Հոդված 22

Կոնվենցիայի նոր՝ 16-րդ հոդվածից հետո ավելացնել նոր՝ 17-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 17. Համագործակցության ձեւերը

1. Վերահսկիչ մարմինները համագործակցում են միմյանց հետ այնքանով, որքանով անհրաժեշտ է իրենց պարտականությունները կատարելու եւ իրենց լիազորություններն իրականացնելու համար, մասնավորապես՝
 - ա. վերաբերելի ու օգտակար տեղեկություններ փոխանակելու եւ միմյանց հետ համագործակցելու միջոցով միմյանց փոխադարձ օժանդակություն տրամադրելով՝ պայմանով, որ անձնական տվյալների պաշտպանության առնչությամբ պահպանվեն սույն Կոնվենցիայով սահմանված բոլոր կանոններն ու երաշխիքները.
 - բ. իրենց քննության կամ միջամտության գործընթացները համակարգելով կամ համատեղ գործողություններ իրականացնելով.
 - գ. տվյալների պաշտպանության առնչությամբ իրենց օրենքի ու վարչական գործելակերպի վերաբերյալ տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելով:
2. 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվությունը չպետք է պարունակի մշակման ենթարկվող անձնական տվյալներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տվյալներն էական նշանակություն ունեն համագործակցության համար, կամ համապատասխան տվյալների սուբյեկտը միանշանակ, կոնկրետ, ինքնակամ եւ տեղեկացված համաձայնություն է տվել դրանք տրամադրելու համար:
3. Իրենց համագործակցությունը կազմակերպելու եւ նախորդ

պարբերություններով սահմանված պարտականությունները կատարելու նպատակով Կողմերի վերահսկիչ մարմիններն ստեղծում են ցանց:»:

Հոդված 23

1. Կոնվենցիայի 14-րդ հոդվածի (նոր՝ 18-րդ հոդված) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Օժանդակություն տվյալների սուբյեկտներին»:

2. Կոնվենցիայի 14-րդ հոդվածը (նոր՝ 18-րդ հոդված) շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր Կողմ օժանդակում է տվյալների ցանկացած սուբյեկտի սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված իր իրավունքներն իրականացնելու հարցում՝ անկախ նրա ազգությունից կամ բնակության վայրից:

2. Եթե տվյալների սուբյեկտը բնակվում է մեկ այլ Կողմի տարածքում, ապա նրան հնարավորություն է տրվում հարցումը ներկայացնելու այդ Կողմի նշանակած վերահսկիչ մարմնի միջնորդի միջոցով:

3. Օժանդակության հարցումը պետք է պարունակի բոլոր անհրաժեշտ տվյալները՝ կապված, ի թիվս այլնի՝

ա. հարցում ներկայացնող՝ տվյալների սուբյեկտի անվան, հասցեի եւ վերջինիս ինքնությունը հաստատող ցանկացած այլ կարեւոր տվյալի հետ.

բ. այն մշակման հետ, որի վերաբերյալ ներկայացվել է հարցումը, կամ դրա վերահսկողի հետ.

գ. հարցման նպատակի հետ:»:

Հոդված 24

1. Կոնվենցիայի 15-րդ հոդվածի (նոր՝ 19-րդ հոդված) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19. Երաշխիքները»:

2. Կոնվենցիայի 15-րդ հոդվածը (նոր՝ 19-րդ հոդված) շարադրել հետևյալ խմբագրությամբ.

- «1. Վերահսկիչ մարմինը, որը մեկ այլ վերահսկիչ մարմնից ստացել է այնպիսի տեղեկատվություն, որը տրամադրվել է հարցմանը կից կամ ի պատասխան իր իսկ կողմից ներկայացված հարցմանը, չպետք է այդ տեղեկատվությունն օգտագործի հարցման մեջ նշված նպատակներից տարբեր այլ նպատակներով:
2. Վերահսկիչ մարմինն ոչ մի դեպքում թույլ չի տրվում իր նախաձեռնությամբ եւ առանց տվյալների տվյալ սուբյեկտի հստակ հաստատման տվյալների սուբյեկտի անունից հարցում ներկայացնել:»:

Հոդված 25

1. Կոնվենցիայի 16-րդ հոդվածի (նոր՝ 20-րդ հոդված) վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 20. Հարցումների մերժումը»:
2. Կոնվենցիայի 16-րդ հոդվածի (նոր՝ 20-րդ հոդված) ներածական դրույթը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Վերահսկիչ մարմինը, որին, սույն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն, հասցեագրվում է հարցում, չի կարող մերժել դրա կատարումը, բացառությամբ, եթե՝»:
3. Կոնվենցիայի 16-րդ հոդվածի (նոր՝ 20-րդ հոդված) «ա» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա. հարցումը համատեղելի չէ իր լիազորությունների հետ:»:
4. Կոնվենցիայի 16-րդ հոդվածի (նոր՝ 20-րդ հոդված) «գ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«գ. համապատասխան հարցումն անհամատեղելի կլինի այն Կողմի ինքնիշխանության, ազգային անվտանգության կամ հասարակական կարգի հետ, որի կողմից այդ մարմինը նշանակվել է, կամ այդ Կողմի իրավազորության ներքո գտնվող անհատների իրավունքների եւ հիմնարար ազատությունների հետ:»:

Հոդված 26

1. Կոնվենցիայի 17-րդ հոդվածի (նոր՝ 21-րդ հոդված) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 21. Ծախսերը եւ ընթացակարգերը»:

2. Կոնվենցիայի 17-րդ հոդվածի (նոր՝ 21-րդ հոդված) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համագործակցությունն ու փոխադարձ օգնությունը, որը Կողմերը տրամադրում են միմյանց՝ 17-րդ հոդվածի համաձայն, եւ աջակցությունը, որը տրամադրում են տվյալների սուբյեկտներին՝ 9-րդ եւ 18-րդ հոդվածների համաձայն, չպետք է առաջացնեն որեւէ ծախս կամ վճարում՝ բացառությամբ փորձագետների եւ բանավոր թարգմանիչների հետ կապված ծախսերի: Վերջիններիս հետ կապված ծախսերը կամ վճարները կրում է այն Կողմը, որը հարցում է ներկայացրել»:

3. *[Կոնվենցիայի 17-րդ հոդվածի (նոր՝ 21-րդ հոդված) 2-րդ պարբերության մեջ կատարվող փոփոխությունը վերաբերում է միայն անգլերենին:]*

Հոդված 27

Կոնվենցիայի V գլխի (նոր՝ VI գլուխ) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գլուխ VI. Կոնվենցիայի կոմիտեն»:

Հոդված 28

1. Կոնվենցիայի 18-րդ հոդվածի (նոր՝ 22-րդ հոդված) 1-ին պարբերությունում «Խորհրդակցական կոմիտեն» եզրույթը փոխարինել «Կոնվենցիայի կոմիտեն» եզրույթով:

2. Կոնվենցիայի 18-րդ հոդվածի (նոր՝ 22-րդ հոդված) 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Կոնվենցիայի կոմիտեն Կողմերի ներկայացուցիչների ձայների երկու երրորդ մեծամասնությամբ ընդունված որոշմամբ կարող է դիտորդ

հրավիրել իր նիստերին ներկա գտնվելու համար:»:

3. Կոնվենցիայի 18-րդ հոդվածի (նոր՝ 22-րդ հոդված) 3-րդ պարբերությունից հետո ավելացնել նոր՝ 4-րդ պարբերություն.

«4. Ցանկացած Կողմ, որը Եվրոպայի խորհրդի անդամ չէ, օժանդակում է Կոնվենցիայի կոմիտեի գործունեության ֆինանսավորմանը՝ այդ Կողմի հետ համաձայնությամբ Նախարարների կոմիտեի սահմանած պայմանների համաձայն:»:

Հոդված 29

1. Կոնվենցիայի 19-րդ հոդվածի (նոր՝ 23-րդ հոդված) ներածական դրույթում «խորհրդակցական կոմիտեն» եզրույթը փոխարինել «Կոնվենցիայի կոմիտեն» եզրույթով:»:
2. Կոնվենցիայի 19-րդ հոդվածի (նոր՝ 23-րդ հոդված) «ա» կետում «առաջարկներ» եզրույթը փոխարինել «հանձնարարականներ» եզրույթով:
3. Կոնվենցիայի 19-րդ հոդվածի (նոր՝ 23-րդ հոդված) «բ» կետում «21-րդ հոդվածին» եւ «գ» կետում «21-րդ հոդվածի 3-րդ պարբերության» հղումները փոխարինել համապատասխանաբար «25-րդ հոդվածին» եւ «25-րդ հոդվածի 3-րդ պարբերության» հղումներով:
4. Կոնվենցիայի 19-րդ հոդվածի (նոր՝ 23-րդ հոդված) «դ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«դ. կարող է կարծիք հայտնել սույն Կոնվենցիայի մեկնաբանմանը կամ կիրառմանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ,»:

5. Կոնվենցիայի 19-րդ հոդվածի (նոր՝ 23-րդ հոդված) «դ» կետից հետո ավելացնել հետեւյալ լրացուցիչ կետերը.

«ե. յուրաքանչյուր անգամ՝ նախքան Կոնվենցիային նոր անդամի միանալը, Նախարարների կոմիտեի համար պատրաստում է միացող թեկնածուի՝ անձնական տվյալների պաշտպանության մակարդակի վերաբերյալ կարծիք եւ անհրաժեշտության դեպքում առաջարկում է միջոցներ ձեռնարկել սույն Կոնվենցիայի դրույթների հետ համապատասխանություն ապահովելու համար,

զ. որեւէ պետության կամ միջազգային կազմակերպության պահանջով կարող է գնահատել, թե արդյո՞ք առաջինի

ապահոված՝ անձնական տվյալների պաշտպանության մակարդակը համապատասխանում է սույն Կոնվենցիայի դրույթներին, եւ անհրաժեշտության դեպքում առաջարկել միջոցներ ձեռնարկել այդպիսի համապատասխանությունն ապահովելու համար,

- է. կարող է մշակել կամ հաստատել 14-րդ հոդվածում նշված ստանդարտ երաշխիքների մոդելներ,
- ը. վերանայում է Կողմերի կողմից սույն Կոնվենցիայի կիրարկումը եւ առաջարկում է միջոցներ ձեռնարկել, եթե որեւէ Կողմ չի համապատասխանում սույն Կոնվենցիայի պահանջներին,
- թ. անհրաժեշտության դեպքում նպաստում է սույն Կոնվենցիայի կիրառման հետ կապված բոլոր խնդիրների խաղաղ կարգավորմանը:»:

Հոդված 30

Կոնվենցիայի 20-րդ հոդվածի (նոր՝ 24-րդ հոդված) տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

- «1. Կոնվենցիայի կոմիտեի նիստը գումարվում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից: Դրա առաջին նիստն անցկացվում է սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում: Հետագայում այն գումարվում է տարվա մեջ առնվազն մեկ անգամ եւ ցանկացած դեպքում, երբ Կողմերի ներկայացուցիչների մեկ երրորդը պահանջում է նիստ գումարել:
- 2. Իր նիստերից յուրաքանչյուրից հետո Կոնվենցիայի կոմիտեն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե հաշվետվություն է ներկայացնում իր աշխատանքների եւ սույն Կոնվենցիայի գործելու վերաբերյալ:
- 3. Կոնվենցիայի կոմիտեում անցկացվող քվեարկությունների ընթացակարգերը սահմանված են ԵԽՊՇ թիվ 223 արձանագրությանը կից՝ գործունեության կարգի հիմնական դրույթներում:
- 4. Կոնվենցիայի կոմիտեն մշակում է իր գործունեության կարգի մյուս հիմնական դրույթները եւ սահմանում մասնավորապես 4-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում եւ 23-րդ հոդվածի «ե», «զ» եւ «ը» կետերում

նշված գնահատման եւ վերանայման ընթացակարգերը:»:

Հոդված 31

1. Կոնվենցիայի 21-րդ հոդվածի (նոր՝ 25-րդ հոդված) 1-4-րդ պարբերությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն Կոնվենցիայում փոփոխություններ կարող են կատարվել որեւէ Կողմի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կամ Կոնվենցիայի կոմիտեի առաջարկությամբ:

2. Կոնվենցիայում փոփոխություն կատարելու վերաբերյալ ցանկացած առաջարկ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվում է սույն Կոնվենցիայի Կողմերին, Եվրոպայի խորհրդի մյուս անդամ պետություններին, Եվրոպական միությանը եւ անդամ չհանդիսացող յուրաքանչյուր պետության կամ միջազգային կազմակերպության, որը հրավեր է ստացել միանալու սույն Կոնվենցիային՝ 27-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

3. Բացի այդ, Կողմի կողմից կամ Նախարարների կոմիտեի կողմից ներկայացված ցանկացած փոփոխություն ներկայացվում է Կոնվենցիայի կոմիտե, որն առաջարկվող այդ փոփոխության վերաբերյալ իր կարծիքը ներկայացնում է Նախարարների կոմիտե:

4. Նախարարների կոմիտեն քննարկում է առաջարկվող փոփոխությունն ու Կոնվենցիայի կոմիտեի կողմից ներկայացված ցանկացած կարծիք եւ կարող է հաստատել այդ փոփոխությունը:»:

2. Կոնվենցիայի 21-րդ հոդվածի (նոր՝ 25-րդ հոդված) 6-րդ պարբերությունից հետո ավելացնել 7-րդ լրացուցիչ պարբերություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7. Բացի այդ, Նախարարների կոմիտեն Կոնվենցիայի կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո կարող է միաձայն որոշել, որ կոնկրետ փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն ընդունելու համար բաց լինելու օրվանից հետո երեք տարի ժամկետն ավարտվելուն պես, եթե Կողմը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին չի ծանուցում դրա ուժի մեջ մտնելու վերաբերյալ առարկության մասին: Այդպիսի առարկության մասին ծանուցվելու դեպքում փոփոխությունն ուժի մեջ է մտնում առարկության մասին ծանուցած՝ Կոնվենցիայի Կողմի կողմից ընդունման մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին

ի պահ հանձնելու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:»:

Հոդված 32

1. Կոնվենցիայի 22-րդ հոդվածի (նոր՝ 26-րդ հոդված) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների եւ Եվրոպական միության ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:»:

2. 22-րդ հոդվածի (նոր՝ 26-րդ հոդված) 3-րդ պարբերության մեջ «անդամ պետության» եզրույթը փոխարինել «Կողմի» եզրույթով:

Հոդված 33

Կոնվենցիայի 23-րդ հոդվածի (նոր՝ 27-րդ հոդված) վերնագիրը եւ տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 27. Անդամ չհանդիսացող պետությունների կամ միջազգային կազմակերպությունների միանալը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն սույն Կոնվենցիայի Կողմերի հետ խորհրդակցելուց եւ նրանց միաձայն համաձայնությունն ստանալուց հետո եւ Կոնվենցիայի կոմիտեի կողմից 23(ե) հոդվածին համապատասխան պատրաստված եզրակացության լույսի ներքո կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետության կամ միջազգային կազմակերպության՝ միանալու սույն Կոնվենցիային՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20(դ) հոդվածով նախատեսված մեծամասնությամբ ընդունված որոշմամբ եւ Պայմանավորվող պետությունների՝ Նախարարների կոմիտեի անդամ լինելու իրավունք ունեցող ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ:
2. Վերը նշված 1-ին պարբերության համաձայն Կոնվենցիային միացող ցանկացած պետության կամ միջազգային կազմակերպության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթը

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնվելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:»:

Հոդված 34

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի (նոր՝ 28-րդ հոդված) 1-ին եւ 2-րդ պարբերությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

- «1. Ցանկացած պետություն, Եվրոպական միությունը կամ այլ միջազգային կազմակերպություն կարող են ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Կոնվենցիան:
2. Ցանկացած պետություն, Եվրոպական միությունը կամ այլ միջազգային կազմակերպություն կարող են Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ավելի ուշ ուղղված հայտարարությամբ սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել այդ հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի վրա: Այդ տարածքի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ հայտարարությունը Գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:»:

Հոդված 35

1. Կոնվենցիայի 27-րդ հոդվածի (նոր՝ 31-րդ հոդված) ներածական դրույթում «պետության» եզրույթը փոխարինել «Կողմի» եզրույթով:
2. «գ» կետում «22-րդ, 23-րդ եւ 24-րդ հոդվածներին» հղումները փոխարինել «26-րդ, 27-րդ եւ 28-րդ հոդվածներին» հղումներով:

Հոդված 36. Ստորագրումը, վավերացումը եւ միանալը

1. Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիայի Պայմանավորվող պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի

խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն Արձանագրության՝ ստորագրման համար բաց լինելուց հետո եւ այն ուժի մեջ մտնելուց առաջ ցանկացած այլ պետություն սույն Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ իր համաձայնությունը տալիս է միանալու միջոցով: Նա չի կարող Կոնվենցիայի Կողմ դառնալ՝ առանց միաժամանակ սույն Արձանագրությանը միանալու:

Հոդված 37. Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի բոլոր Կողմերի կողմից, 36-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթներին համապատասխան, Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ համաձայնություն տրվելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:
2. Այն դեպքում, երբ սույն Արձանագրությունն ուժի մեջ չի մտել 1-ին պարբերությանը համապատասխան, Արձանագրությունն ստորագրման համար բաց լինելու օրվան հաջորդող հինգ տարվա ժամկետը լրանալուց հետո այն ուժի մեջ է մտնում այն պետությունների համար, որոնք դրանով պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ իրենց համաձայնությունն են տվել 1-ին պարբերությանը համապատասխան՝ պայմանով, որ Արձանագրությունն ունի առնվազն երեսունութե Կողմ: Ինչ վերաբերում է Արձանագրության Կողմերի միջեւ հարաբերություններին, ապա փոփոխված Կոնվենցիայի բոլոր դրույթները գործում են ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո:
3. Մինչեւ սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելը, ինչպես նաեւ չհակասելով ուժի մեջ մտնելու ու անդամ չհանդիսացող պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից դրան միանալու վերաբերյալ դրույթներին՝ Կոնվենցիայի Կողմը կարող է սույն Արձանագրությունն ստորագրելու ժամանակ կամ ավելի ուշ՝ ցանկացած ժամանակ, հայտարարել, որ ինքը կիրառելու է սույն Արձանագրության դրույթները ժամանակավոր հիմունքներով: Նման դեպքերում սույն Արձանագրության դրույթները կիրառվում են Կոնվենցիայի միայն այն Կողմերի նկատմամբ, որոնք դրա վերաբերյալ հայտարարություն են արել: Այդպիսի հայտարարությունն ուժի մեջ է մտնում այն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի ստանալու օրվան հաջորդող երրորդ ամսվա առաջին օրը:

4. Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ Վերահսկիչ մարմինների եւ տվյալների անդրսահմանային հոսքերի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը (ԵՊՇ թիվ 181) համարվում է ուժը կորցրած:
5. 1999 թվականի հունիսի 15-ին Ստրասբուրգում Նախարարների կոմիտեի հաստատած՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի մեջ կատարված փոփոխությունները սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից դադարում են գործողության մեջ լինել:

Հոդված 38. Կոնվենցիայի վերաբերյալ հայտարարությունները

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն մեկ կամ ավելի հայտարարությունների միացած ցանկացած Կողմի նկատմամբ այդպիսի հայտարարությունը (հայտարարությունները) անվավեր է (են) համարվում:

Հոդված 39. Վերապահումները

Սույն Արձանագրության դրույթների մասով որեւէ վերապահում չի կարող արվել:

Հոդված 40. Ծանուցումները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին եւ Կոնվենցիայի Կողմ որեւէ այլ պետության.

- ա. ցանկացած ստորագրման,
- բ. վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին որեւէ փաստաթուղթ ի պահ հանձնելու,
- գ. 37-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվա,

դ. սույն Արձանագրությանն առնչվող ցանկացած այլ ակտի, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում 2018 թվականի հոկտեմբերի 10-ին, անգլերենով եւ ֆրանսերենով, երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, որն ի պահ կհանձնվի Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները փոխանցում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, Կոնվենցիայի մյուս Կողմերին եւ սույն Կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետության:

Արձանագրության հավելված. Կոնվենցիայի կոմիտեի գործունեության կարգի հիմնական դրույթները

1. Յուրաքանչյուր Կողմ ունի քվեարկելու իրավունք, ընդ որում՝ մեկ ձայնի իրավունքով:
2. Կողմերի ներկայացուցիչների երկու երրորդ մեծամասնությունը Կոնվենցիայի կոմիտեի հանդիպումների համար համարվում է քվորում: Այն դեպքում, երբ Կոնվենցիան փոփոխող արձանագրությունը մինչև Կոնվենցիայի բոլոր Պայմանավորվող պետությունների համար ուժի մեջ մտնելը ուժի մեջ է մտնում դրա 37(2) հոդվածին համապատասխան, Կոնվենցիայի կոմիտեի հանդիպումներին քվորումը չպետք է կազմի սույն Արձանագրության 34 Կողմից պակաս:
3. 23-րդ հոդվածի համաձայն ընդունված որոշումները կայացվում են ձայների չորս հինգերորդ մեծամասնությամբ: 23-րդ հոդվածի «ը» կետի համաձայն ընդունված որոշումները կայացվում են ձայների չորս հինգերորդ մեծամասնությամբ, այդ թվում՝ Կոնվենցիայի Կողմ համարվող՝ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության անդամ չհանդիսացող Կողմ պետությունների ձայների մեծամասնությամբ:
4. Եթե Կոնվենցիայի կոմիտեն որոշումները կայացնում է 23-րդ հոդվածի «ը» կետի համաձայն, ապա այն Կողմը, որին վերաբերում է վերանայումը, քվեարկությանը չի մասնակցում: Ցանկացած դեպքում, երբ նման որոշումն առնչվում է տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության իրավասությանը վերաբերող որեւէ հարցի, ո՛չ կազմակերպությունը, ո՛չ դրա անդամ պետությունները քվեարկությանը չեն մասնակցում:
5. Ընթացակարգային հարցերին առնչվող որոշումները կայացվում են պարզ մեծամասնությամբ:
6. Տարածաշրջանային ինտեգրման կազմակերպություններն իրենց իրավասությանը վերաբերող հարցերի դեպքում կարող են իրականացնել Կոնվենցիայի կոմիտեում քվեարկելու իրենց իրավունքը՝ դրանց այն անդամ պետությունների թվին հավասար ձայներով, որոնք

Կոնվենցիայի Կողմեր են: Այդպիսի կազմակերպությունը չպետք է իրականացնի իր քվեարկելու իրավունքն այն դեպքում, երբ իր անդամ պետություններից որեւէ մեկն իրականացնում է այդ իրավունքը:

7. Քվեարկության դեպքում բոլոր Կողմերը տեղեկացվում են քվեարկության առարկայի ու ժամի մասին, ինչպես նաեւ այն մասին՝ Կողմերն առանձի՞ն են իրականացնելու իրենց քվեարկության իրավունքը, թե այն իրականացվելու է տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության կողմից՝ անդամ պետությունների անունից:
8. Կոնվենցիայի կոմիտեն կարող է հետագայում փոփոխել իր գործունեության կարգը ձայների երկու երրորդ մեծամասնությամբ՝ բացառությամբ քվեարկության ընթացակարգի, որը կարող է փոփոխվել միայն Կողմերի միաձայն քվեարկությամբ, եւ որի նկատմամբ կիրառվում է Կոնվենցիայի 25-րդ հոդվածը:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**